ԻՏԱԼԻԱ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ

(«Արարատ» 1880, մայիս)։

Քաղաքի համատեսիլ պատկերի հետ ծանօթանալու համար հարկաւորէ թռչունի նման օդի մէջ բարձրանալ և այնպէս նայել։ Թռչունի նման օդի մէջ բարձրանալու փոխանակ աւելի լաւ կլինի Ս. Մարկոսի զանգակատան վերայ բարձրանալ։ Նորա ամենաբարձր պատշգամից ձեր ոտքերի տակ մի ահագին քաղաք կտեսնէք, որ կարծես թէ դիւթական զօրութեամբ կանգնեցրած է ծովի մէջ, ջրային փողոցներով կտրատուած և ճահիճների կանաչ ջրերով շրջապատուած, որոնք հետզհետէ աննշմարելի կերպով միանում են Ատրիական ծովի կապոյտ ջրերի հետ։

Վենետկի տների մեծ մասի հիմքերը կամ ջրանցքների ջրերն են թրջում, և կամ տները ջրանցքներից բաժանուած են սաստիկ նեղ փողոցներով, որոնք աւելի նման են նրբանցքների քան թէ փողոցների և կատարեալ լաբիրինթոսներ են կազմում, որոց մէջ օտար երկրացին մեծ դժուարութեամբ կարող է ճանապարհը գտնել։ Այնու ամենայնիւ հետիոտս զբօսնուելը շատ հետաքրքիր է։

Մենք նախ և առաջ ծանօթանանք Ս. Մարկոսի հրապարակի հետ։ որովհետև Վենետկի շարժողութեան գլխաւոր կենդրոնն է։ Այս հրապարակը ծածկուած է մեծ մարմարեայ քարերով, երեք կողմից շրջապատված է հիանալի շինութիւններով, որոնք բոլորը միասին, կարծես թէ, մէկ մարմարիոնեայ մեծ պալատ են կազմում։ Այս պալատները երբեմն հասարակապետութեան անդամների բնակարաններ էին։ Երեկոյները այդ շինութիւնները միմեանց հետ միացնող կամարները գազով են լուսաւորուում, բայց իսկական հրապարակի վերայ գտնվումեն ձուլածոյ ջահեր սպիտակագոյն ապակեայ բազմաթիւ լապտերներով։ Շարժողութիւնը աւելի սաստկանում երեկոյեան ժամանակ։

Սրճանոցները լեցուած են ժողովրդով։ ամեն կողմ անց ու դարձ են անում զբօսնողները, մանրավաճառների աղաղակները, քնարահարների երգերի, քաղցր երգեհանների ախորժ հնչիւնը, և Վենետկեցիների խօսակցութեան սուր ձայները լսվում են ամեն կողմից։ Ցանկարծ մի փոքր հեռուից լսվում սոխակի դայլայլիկը, որին իսկոյն յաջորդումեն հաւի կըռկռոցը և ոչխարի բառաչիւնը։ Այդ ձեռնածուն է, որ իւրեան շրջապատող ժողովրդի առաջ, զանազան կենդանիների և թռչունների ձայներ է հանում։

Այդ տեղից երկու քայլ հեռու գտնվումէ կատեդրան, կամ աւելի լաւ ասած, փողոցի գերեզմանը։ Նա իւր զգեստը անհաւատալի արագութեամբ դարձնում հակառակ կողմը և իւր գլխարկին զանազան ձևեր է տալիս։ Ամենայն մի ներկայացումի հետ նա անում է զանազան ձևեր և շարժմունքներ։ «Պարոններ, չէ՞ք կամենում արդեօք տեսնել Նապոլէոնին։ Եւ ձեր առաջ դուք երբեմն տեսնում էք նոյն ինքն Նապոլէոնին, երբեմն էս

մի Աւստրիացի զինւոր բայց ունին յաճախ մի ծիծաղութիւն. Նա ինչ մարդու որ կամենում ներկայացնել, աշխատում թէ ձայնով, թէ նայուածքով թէ զգեստով և թէ մարմնի ձևերով նորան նմանել. Աչուառիկ և շաքարեղէն վաճառողը, որ իւր ուսից մի արկղ է կախած, որի տակուց վրայից երևում են զանազան շաքարեղէններ. Նա ևս գիտէ իւր վերայ ուշադրութիւն դարձնել տալու եղանակը: Երբ անցնում՝ երիտասարդ ասում «պարոններ և տիկիններ, գնեցէք. Իմ շաքարեղէններս չքնաղ օրիորդի համբոյրների նման քաղցր են». Եւ անցնող պարոնը ի շնորհակալութիւն նորա սատանելի խօսքին առնում շաքարեղէնից. Իսկ երբ անցնում մի որևիցէ արեգակ նա ասում. «Գնեցէք պարոններ, իմ շաքարեղէններս քաղցր են և այն ժամանակ, երբ որ խորամանկ ծիծաղութիւն աչքերը ձեր վերայ են դարձուած»: Բոլոր հասարակութիւնը այս խօսքերի վերայ ծիծաղում, և իսկոյն մի քանի ձեռքեր պարզվում են շաքարեղէններ առնելու.

Առաւօտեան Ս. Մարկոսի հրապարակը, համարեա թէ, բոլորովին դատարկ է. Վենետիկցիները շատ ուշ են վերկենում՝ կէս օրին հրապարակի վերայ շրջելը համարւում է. Աղաւնիները անթիւ քանակութեամբ երկու ժամին այստեղ են հաւաքւում կերակրուելու համար. Վենետիկցիները սիրում և պաշտպանում են աղաւնիներին, որոնց հետ կապված է նոցա պատմական յիշատակները: Աւանդութիւնը ասում է, որ աղաւնիները վերջապահն պատերազմներում Վենետիկցիների համար հեռագիրների պաշտօն էին կատարում և ահա այդ պատճառաւ Վենետիկցիները նոցա շատ են սիրում. Նոցանից մի քանիսը հրապարակի մերձակայ շինութիւնների վերայ են բոյն դնում, միւսները Ս. Մարկոսի եկեղեցւոյ կամարների տակ են հիւրասիրուած. Կէս օրից սկսեալ Ս. Մարկոսի հրապարակը աւելի սաստիկ է կենդանանում. Ս. Մարկոսի եկեղեցու առաջ՝ ոսկեզօծեալ պատուանդանով կախված է Ս. Մարկոսի թևաւոր առիւծեայ դրօշակը. Շատ մարդիկ պառկած կամ նստած են մարմարիոնեայ տաճարի շուրջը. Քաղաքի ջրկիրուհիները գոյնզգոյն բաճկոնակներով և երկար դղեայ դըտակներով փայտերի վերայ անցկացրած պղնձեայ ամաններով ջուր են կրում պալատի ջրհամբարից: Արձանների մօտ փոքրիկ սեղանների շուրջը նստած են տիկիններ, որոնք իւրեանց անհրաժեշտ հովահարներով են խաղում, շրջում և ծաղիկ վաճառողները ցանցաձև գործուած կողովները ձեռքերին և ժպտալով առաջարկում են մանուշակից և յասմիկից պատրաստուած գեղեցիկ փնջերը. Շատ հազիւ է պատահում բոկոտն աբեղան սափրած գլխով, ուղտի գոյնով վերարկու հագած և պարանեայ գօտի կապած. Աշակերտները հրապարակից խումբ խումբ անցնելով երգում են la bella Venezia, փողոցներում շրջում են և ջրավաճառները որոնք երգերով գովում են իւրեանց թարմ ջուրը: Ահա այս բոլորը համարեա թէ մի թատրոնական ներկայացում է, որ նման չէ ոչ գիմնակահանդէսներին և ոչ իտալական թատերանուագներին»: Այս հրապարակի մէջ աւելի ուշադրութեան արժանի է քաղաքի պաշտպանի — Ս. Մարկոսի տաճարը. Վե-

նեանկեցիների պատմութեան և ճաշակի արժանի յիշատակարանը։ Տաճարի ներսի կողմը ոչ այնքան իւր հոյակապութեամբ՝ որքան իւր գեղեցկութեամբ, շքեղութեամբ և ճարտարապետական բազմազան ձևերով մեծ տպաւորութիւն է գործում մարդի վերայ։ Ոչ մի տեղ քեզ չի պատահի այնքան մեծ քանակութեամբ ոսկեայ լուսակեայ և մարմարեայ անօթներ որքան որ այս տեղ է պատահում։ Նիկիայի և Սոֆիայ զանազան կողմերից բերել են տալիս տաճարի շինութեան համար հարկաւոր եղած պարագաները, բայց նորա շինող ճարտարապետի հանճարը այս պարագաներով կարողացաւ շինել մի զարմանալի հոյակապ և գեղեցիկ շինութիւն։ Նորա շինութեան ժամանակ ամեն մարդ իւրեան պարտք էր համարում ամենայն տեսակ նուէրներ տալ. ինչպէս են լուսաւորեալ քարաձևեր մարմարիոյ սիւներ, թանկագին քարեր, արծաթեայ դրամներ ևլն. ևլն.

Շինութեան ճակատի վերայ հինգ լուսաւորեալ դռների վերայ բարձրանում են հինգ կամարներ, որոնք միմեանցից բաժանուած են բազմաթիւ կարմրագոյն սիւներով և որոնցից միջինի վերայ դրուած է քառաձի կառք, որ յափշտակած են Կ. պօլսոյ հրապարակից։ Միւս կողմը նորից շարունակվում են կամարներ, որոնցից ծայրինները ծածկուած են ոսկու պէս փայլուն յաղճապակիով, իսկ միջակներին վրայ գտնուող ապակիների միջից փայլում է մեծ աղամանդի կտորը, իսկ նորա վերայ ծիրանի դաշտի մէջ թևաւոր առիւծը երկութեր դրած է բացուած աւետարանի վերայ։ Դէպ ի վեր շարունակվում են սրածայր գոթական փոքրիկ աշտարակները բաժանված ընմայը գծուած պատուհաններով, իսկ սոցա վերայից խաչապատ բիւզանդական գմբէթները բարձրանում են դէպի կապոյտ երկինքը։ Եւ շինութեան այս գեղեցիկ ճակատը զարդարուած է տեսակ տեսակ գեղեցիկ զարդերով, Քրիստոսի համբարձման պատկերը յաղճապակուց, իմաստութեան և յուսոյ այլաբանական պատկերների քանդակներ, Գևորգայի արձանը ուրիշ առաքեալների արձանների հետ, նահատակների և աւետարանիչների արձանները։ Քրիստոնէական հաւատի մեկնութիւնները խառնվում են միջնադարեան հեթանոսական խորհրդաւոր պատկերների և առասպելեան անձերի հետ։

Ս. Մարկոսի տաճարը աւելի նուիրուած է ճաշակի քան թէ աղօթքի, և այդ պատճառով էս այստեղ աւելի յաճախում են զբօսաւէրներ քան թէ աղօթողներ։

Վենետիկեցիները իւրեանց պաշտպանին տաճար կանգնելու համար շատ գանձ, հանճար և աշխատութիւն գործ դրին, բայց համարեա թէ ոչ պակաս ծախս արին մի ուրիշ շինութիւն էս կանգնեցնելու համար, որը նոցա տիրապետողների բնակարան, դողանի դատաստանի նիստի և նորա դոժերի բնակարան տեղ էր, — սա Դոժերի պալատն է։ «Ինչպէս որ Ս. Մարկոսի տաճարը՝ նմանապէս և սա շինուեցաւ մի քանի դարերի ընթացքում բազմաթիւ պարգևատրուած ճարտարապետների ձեռքով։

Եւ այս շինութեան գեղեցկութեան վերայ չէ կարելի չզմայլել Ռյուսկա-

կան ծովեզերքից նայելու ժամանակ։ Այստեղից կտեսնուի ուղղակի դէ-նից դուրս եկած սպիտակ մարմարանեայ սիւներ, որոնք իւրեանց քանդա-կուորեալ վերնախարիսխների վերայ կրում են նմանաման կամարների եր-կար նրբանցքները։ Նոցա վերայ երկրորդ կարգ վարդագոյն մարմարանեայ սիւներ կազմում են երկրորդ նրբանցքը, զարդարուած ճարտարապետական քանդակներով, յետոյ բարձրանում բաց վարդագոյն վանդակաձև պատը լայն պատուհաններով, որի մէջտեղից կախուած է պատշգամբը, զարդար-ված ազնեգործ մարմարիոններով. Իր ամպհովանին բարձրանում ա-ռաստաղի վանդակաձև քանդակների վրայ, որի անկիւնների վերայ դրըն-ւում են փոքրիկ աշտարակներ կանգնած քառանկիւնաձև կամ արձանեայ սիւների վերայ։ Դօժերի պալատը քննելու ժամանակ մարդ ամենից ա-ւելի կզարմանայ, թէ ինչպիսի ճարտարապետութիւն կարողացաւ հաս-տատել այս ծանր շինութիւնը այդպիսի բարակ սիւների վերայ։ Պալա-տի միւս երկու ճակատները բոլորովին այլ ճաշակով են շինուած, նոքա դարձրած են դէպի Ս. Մարկոսի տաճարի սրահը և բանտերը, որոնք նորա հետ միանում են Ողբ-ի-ն երևելի կամրջով, այնպէս որ շատ սենեակների պատուհաններից կարելի է բանտերը տեսնել . . . . ի՜նչ անհամոյ դրա-ցութիւն. Այս պալատի բոլոր բնակիչների հոգու վերայ արդեօք ի՞նչ վատ ազդեցութիւն են ունեցած այս բանտերը։

— «Արդեօք այդ ի՞նչ, այդ ի՞նչ դէզեր են դրան մօտ» հարցնում ճա-նապարհորդը։ «Դոքա հասարակապետութեան դէմ յարուցած խռովու-թեան պատճառով դատապարտուած չորս եղբայրների յիշատակի համար են դրած»։ «Բայց այն ի՞նչ լուսնոսկեայ գլուխ է որ գտնվում տաճարի և պալատի մէջ»։

— «Դա հասարակապետութեան զօրավարի Կառմանեօլի գլխի օրինակն է, որին յետոյ պատժեցին կասկած տանելով որ դաւաճան է»։ — «Ապա այս սիւնե՞րը, ի՞նչպէս գեղեցիկ են, արդեօք սոքա ինչպէս այժմ, առաջ և՞ս գեղեցկութեան համար են եղած»։ — «Այդ սիւները արևել-քից են յափշտակած, դոցա բանուածքների վերայ աշխատած են շատ երևելի քանդակագործներ, Վենետկի հասարակապետութեան ժամանակ դոցա մէջից գլխաւորապէս կախում էին ազնուական յանցաւորներին, ո-րոնք նախ մեռած էին լինում պալատի բանտերում»։ — Պալատի սիւներից ինչո՞ւ համար միմիայն մինն է կարմիր»։ — «Նորա վերայ սովորաբար յանցաւորների դատավճիռները էին կախում»։

Վերջապէս դուք կհասնիք հսկաների մարմարեայ սանդուխին, որը իւր անունը ստացած է երկու սիւնանման արձաններից Մարսի և Նեպտունի։ Այս երկու արձանները Վենետկեցիների ծովի և ցամաքի վերայ ունեցած տիրապետութեան նշանակներն են։ Այս մարմարեայ սանդուխի քանդակ-ների վերայ աշխատած են երևելի քանդակագործներ, և ճշմարիտ որ սորա քանդակները շատ գեղեցիկ են։ Այս սանդուղի ամենավերին աստիճանի վերայ Դօժերին էին պսակում և նորընտիրը Սենատից ոսկեայ գլխարկ էր

ստանում, մարգարիտներով և թանկագին ակներով զարդարուած. «Վեր-ջապէս այն», ասում ճանապարհորդը, «թագաւորութեան յիշատակները այլ եւս չես տեսներ և միայն Վենետիկի նախկին ազդեցութեան և հարստութեան վերայ պիտի զարմանաս». — «բայց մի՞թէ դուք չէք մտածում», յանկարծ ձեր խօսքը ընդհատում է առաջնորդը, «պատի մէջ այս ծակերը . . . առաջ այդ ծակերի մէջ մարմարիոնեայ առիւծների բաց արած բերաններ կային և կամեցողները այնտեղ էին ձգում իրեանց ամբաստանութիւնները»։

Ու ահա դուք վերջապէս հին պալատի շքեղ դահլիճներումն էք գտնըվում, որտեղ գիշերները շատ անգամ շատ կարևոր խորհուրդներ էին կատարվում։ Դուք այժմ այնտեղ չէք կարող գտնել արևելեան շռայլութիւնը. ոչ ծիրանիները, ոչ ոսկիները և ոչ թանկագին քարերը, բայց և այնպէս դուք այնտեղ կտեսնէք վենետկեցւոց պատկերահանների զանազան տեսակ ազնիւ աշխատութիւնները։

Նախ և առաջ հարկաւոր է Մաջիօրէ Կօնսիլիօ դահլիճը դիտել։ Շատ դժուար է երևակայել մի ուրիշ շինութիւն այդքան սքանչելի, թէ իր մեծութեամբ, թէ զարդերի շռայլութեամբ և թէ գեղարուեստական իրերի հարստութեամբ։ Պատերը և առաստաղը քանդակներով և պատկերներով են ծածկված. Մեծ ձուաձև և քառանկիւնի ոսկեզօծ շրջանակների մէջ գրուած են Թինթօռէտտօ և Պօլէ Վերօնէզէ աշխատութիւնները, որոնք այլաբանական տեսարանների ժամանակ, Վենետիկի յաղթանակի և մեծութեան ներկայացուցիչներն են, բոլոր դոժերի պատկերները ևս այնտեղ են գրուած, բայց Մարինօ Ֆալիերի դոժի պատկերի տեղը դատարկ է, իսկ շրջանակը սև քողով է ծածկված այս վերնագրով. «յանցանքի համար գլխատուած Մարինօ Ֆալիերի տեղն է»։ Այս վերնագիրը իւրաքանչիւր դոժի աչքին էր ընկնում, երբոր նա բոլոր պատուով միւս երևելի աստիճանաւորների ներկայութեամբ բազմումէր այդ դահլիճում։

Բոլոր դահլիճներից ամենանշանաւորն է դեսպաններ ընդունելու դահլիճը, որը մինչև այժմ իր նախկին զարդարանքները պահպանած է. դոժերի ամբիոնը ևս այնտեղ է գտնվում։ Նորա յատակը թանկագին գոյնզգոյն մարմարիոններով է ծածկուած, պատերի վարի մասը ծածկված է կիպարիօններով. որոնք բիւզանդայից են յափշտակված, պատերը և առաստաղը զարդարուած են երևելի քանդակագործների ձեռագործներով։ Պատերի վերայից կախած են թանկագին գործուածքներ, որոց մօտ դրուած են դոժի և նորա խորհրդականների աթոռները։ Այս դահլիճը այնպէս էր զարդարված որ իւր հարստութեամբ, շռայլութեամբ և վսեմութեամբ օտար դեսպաններին շլացնէր։

Այժմ այդ դահլիճները բոլորովին դատարկ են և հասարակութեան թանգարանի կամ մատենադարանի տեղ են ծառայում։ Այժմ մտնենք տասնիրի խորհրդի դահլիճը ուր կատարվումէր և հաւատաքննութեան դատաստանը։ Չէ կարելի երևակայել այն գեղեցիկ զարդերը, որոնցով ծածկ-

ված են չորս պատերը և առաստաղը, որոնց ամենամայլ և արիւնահեղ դատաստաններ էին կատարվում։ Բարձր կամարը բոլորը ոսկով և զարդերով ծածկված, գեղեցիկ փայլուն և չանցնող ներկերով ներկված թևաւոր վի-շապի վերայ, պահվում է Վենետիկի այլաբանական պատկերը, դիցաբանա-կան աստուածուհիներից շրջապատուած։ Այս պալատի զարդարված ա-ռաստաղի տակ կատարվում էին շատ արիւնահեղ դատավճիռներ»։

Այս դահլիճի մօտ կան մի քանի նեղ անցքեր և մի քանի փոքրիկ խցեր, որտեղ պահվում էին հնութիւններ և երբեմն ես հաւատաքննու-թիւններ էին կատարվում, այստեղ է և օրհասական դուռը որ նեղ նըր-բանցքով տանում է դէպի ջրի վերայ գտնվող Ոզզոխեան կամուրջը։ Այս կամրջի վերայով հաւատաքննիչները յանցաւորներին ուղարկում էին դէպի բանտերը։ Այս միենոյն դռնով կարելի է երթալ և դէպի ստորերկրեայ պալատները կամ հորերը կապարեայ կամարաձև առաստաղներով, որ-տեղ բանտարկվածներին պապակեցնում էին։ Իհարկէ շատ դժուար է այդ պալատների մէջ բնակել, որովհետև առաստաղները տաքից տաքանում էին, և ներսի տաքութիւնը ևս անտանելի էր դառնում, բայց այնու ամե-նայնիւ այստեղ կարելի է մարդու օդ շնչել։ Վենետկեցիների բանտերի աշխարհութիւնը լաւ հասկանալու համար հարկաւոր է հորերի յատակը իջնել, որտեղ վհատում էին մի փոքր կասկածանքի տակ ընկնելու համար բանդարկուած հազարաւոր դշհեր։

Այժմ զբօսնենք ջրի վերայ։ Ջրանցքների վերայով նաւակների կամ կոնդոլաների վերայ նստած կարելի է իւրաքանչիւր շինութեան մօտենալ։ Կոնդոլաները և նաւակները վենետկեցիների համար կառքերի և հանրա-կառքերի պաշտօն են վարում։ Թէև կոնդոլաները փոքրիկ ցած և սև նաւակների մէջ կարող են 2, 3 մարդիկ պարունակվել։ Կոնդոլաների մէջ դրուած են բարձեր, իսկ իրենք անպատճառ սև գոյնով ներկված պէտք է լինին։ Կոնդոլայից աւելի ընդարձակ, չորս կողմը նստարաններ դրված և զանազան շորերով ծածկված նաւակի մէջ 6 կամ աւելի մարդիկ կարող են նստել։ Իւրաքանչիւր կոնդոլայի մօտ գտնվում է կոնդոլավարը սպիտակ շա-պիկով, որ կապոյտ վարտիքի մէջ է դրած, նա մէջքը կապած է կարմիր գօտի, գլուխը դրած է կարմիր ծոփով գլխարկ, և նորա ոտքերը մինչև ծունկերը մերկ են։ Նա միշտ կանչում է «պարոններ ահա լաւ կոնդոլայ» — բոլոր անցուդարձ անողները իմ կոնդոլան պիտի վարձեն» — «նորա կոնդո-լան գնում է» . . . և կոնդոլավարները աշխատում են մինը միւսից առաջ բահիզէթները և մինչև անգամ նոյնիսկ ճանապարհորդին իր կոնդոլայի մէջ քաշել։

Ում որ յաջողում է այդ բոլորը ամենից առաջ կատարել, իսկոյն իր ըն-կերակիցների հազարաւոր ծաղրածութիւնները և կծուարանութիւնները նորա վերայ կթափին։

Կոնդոլայի մէջ շատ յարմար նստելով, կամ թէ չէ նորա փափուկ անկի բարձերի վերայ պառկելով դուք ջրանցքի կանաչագոյն ջրի վերայով

անցնում էք։ Առաջ մի քանի անգամ՝ նա ձեզ շարժում այս և այն կողմ, բայց շուտով նա կրկին հանգստ լողալ ջրի վրայով։ Դուք ձեր շուրջն էք նայում և ամենևին չէք կարող յագենալ այս ջրերի փողոցների գեղեցկութեամբ, որոնք զարդարված են մարմարից պալատներով։ Այսպիսի պարզ և հասարակ տեսարաններ ձեզ ամէն մի քայլափոխում է պատահում՝ Ջրի երկայնութեամբ ձգուած նեղ ափերի վրայ դուք կտեսնէք տնակների բոլոր կեանքը, այստեղ բոլորը բաց է, բոլորը երևս է դրված։ Կանանց մի ամբողջ խումբ նստած են մազերը շինելու, Նոքա իրարանցից իրենց ծնկների վրայ դրած են իրենց մանուկներին և միմեանց խճողված և թաղիքի նման կոշտացած մազերն են սանդրում, մի փոքր այն կողմը գաժան գէմքով պառաւը փաղում մանուկի եռեսից և ձեռքին ինչ որ պատահի ձգում նորա եռեսից, այնտեղ հացի փռատուներն են փռում՝ ոչխարներ և սագեր են կարմրցնում ․ ․ ․ ․ ․ Անցան այդ տեսարանները և ահա ձեր առաջ նորից երևում մի կարգ պալատներ։ Նոցա սևացած ճակատները տխուր և մռայլ են, բայց այդ շինութիւնների ճարտարապետութիւնը չափազանց բնական է։ Նոցա պատշգամբները ջրից դուրս ցցված պատուհաններով զարմանալի նուրբ մարմարիներայ ճարտար բանվածքներով, նկարներով զարդարված և երբեմն խաղուցի թուփերով պատատված են, որոց տակից առանց ձայնի անցնում ձեր կոնդոլան։ Բայց և այնպէս այս պատշգամբների վրայ ոչ մի կենդանի էակ չէ երևում, նոցա պատուհանները մեծ մասամբ ամուր փակված են նեցուկներով, որովհետև նոցա տէրերը շատ ժամանակից ի վեր մեռած են։ Նորա սանդուխների կիսաւեր աստիճանների վրայ ջուրը դանաղան խեցեմորթեր և ծովային բոյսեր է լցրած, նա շատ երկար մնում այս դրութեան մէջ մինչև որ նորա նոր տէրը, այս մեծ, բայց երեսի վրայ ձգված շինութիւնը շնչին գնով առնելով նորան կրկին առաջուայ դրութեան հասցնէ։ Պատերի շատ տեղերից մարմարեայ զարդերը հանված են և միայն կանաչ պատատուկը ծածկում այս մերկութիւնը, «Ի՜նչ աղքատութիւն»։ Մտածում ամէն ճանապարհորդ. Ի՜նչպիսի անկում հին ժամանակ այնչափ հարուստ և հզօր քաղաքի։ Այժմ ինչո՞վ է յայտնվում ժողովրդեան հանճարը, ճաշակի բազմազանութիւնը։ Երևի գոցա նախնի տէրապետները իրենց փառքի և քմահաճութեան համար երկար ժամանակ մարդերի վրայ տիրելով ժողովրդի կեանքի հիւթն էին ծծում և վերջապէս նորան ինքնուրոյն աշխատութեամբ անընդունակ արին»։

Եւ յիրաւի ձեր այս խորհրդածութիւնները հաստատելու համար, կարգաված կոնդոլան դէպի ձեզ է գալիս և նորանից լեռայ տասնեակ մանուկների մերկ ձեռքեր դէպի ձեզ են մեկնվում։ Բայց այժմեան կառավարութիւնը աղքատներին հեռամուտ է և հետզհետէ աղքատների թիւը պակասում, Բացի դէպի աշխատանք ունեցած արհամարհանքից և բարոյականութեան խանգարումից այսպիսի գնչութիւնը կարելի է բացատրել և փող սիրելուց։ Եւ ճշմարիտ որ վենետկեցիք փող շատ են սիրում, իսկ

ոսկին նոքա աստուածացնում են։ Խեղճ հիւանդը համոզված է, որ եթէ մատօննան նորան ողորմի և իւրեն օգնէ արծաթ բուրլի ձեռք բերելու, նա անպատճառ փրկված կլինի։ Ամենայնեւին աղախինը իւրեան զրկում է ամեն բանից, քաղցած է պահում, որպէս զի իւր ետ ձգած փողովը գոնէ քառորդ արշին ոսկի շղթայ գնէ։ Շատ անգամ պատառոտված շորերով աղքատը որ իւր ձեռքը երկարեցնում է դէպի ձեզ մի չնչին փող առնելու համար, դուք նորա մատերի վերայ կարողէք տեսնել ոսկեայ մատանի։ Զնայելով որ վենետիկեցին առ ոսկին և առ փողը այս աստիճան սէր ունի այնու ամենայնիւ նա ամենեւին չէ կամենում շատ աշխատել, Դիւրին ձեռք բերած մէկ կոպէկը նորա համար աւելի արժէք ունի քան թէ քըրտինքով ձեռք բերած մէկ բուրլին։ Բայց իտալացիք փող պահելու փափաք ամենեւին չունին։

Հասարակ ժողովուրդը փող է հաւաքում մինչև որ կարողանայ մի մատանի կամ մի շղթայ, համադամ կերակուրներ և պտուղներ առնել իւրեան համար։ Եթէ որ նա կարողացաւ շատ փող ձեռք բերել, նա կսկսի կօնդօլավար դառնալ։ Հիւսիսային կողմերը այս դրութեան հասած խեղճ մարդիկը այսպէս չեն անում, այլ նոքա աշխատումեն իւրեանց կերակուրները լաւացնել, իսկ իտալացիք իւրեանց կերակուրի վերայ ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում։ Շատ դժուար է հաւատալ թէ նա ինչ տեսակ վատ և քիչ կերակուրներով բաւականանումէ։ Տան տիկինը առաւօտեան եգիպտացորեանի ալիւրը ջրով և աղով շաղախումէ, մի քանի վայրկեան նա այդ խառնուրդը եփումէ և ահա պատրաստ է բօլէնտայ, եթէ որ սորա հետ միասին տան մէջ գտնուի չորացրած ձուկն և մի քիչ գինի այն ժամանակ հասարակ մարդը իւր սեղանը բոլորովին անգին է համարում։ Ժողովրդի մեծ մասը ժամանակ առ ժամանակ չեփած ծովի սարդ ուտելով է ապրում և որպէս զի կերակուրը տեսակ տեսակ լինի, նա մի քանի հատ էլ նոյն բանի եփածիցն է ուտում, և այս բոլոր կերակուրի հետ նա ուտումէ մի փոքր կտոր հաց, որը մենք հազիւ նստել կարողացող ծիծ ուտող մանուկին կտայինք։ Ոչ մի վատ բան չկայ, որով նա իւր փորը չլցնէ։ Նա մանրավաճառներից գնումէ այն, ինչ որ պատահումէ, ձիթենոյ իւղի մէջ տապակած խմորեղէն, ոսպ, շաղկամ, բողկ, շագանակ ևլն. ևլն. միևնոյն ժամանակ պէտք է նկատել որ այս բոլորն եւս դժուարամարս բաներ են։ Միսը ինչպէս ամբողջ իտալիայում, նոյնպէս և վենետիկում հասարակ ժողովուրդը շատ ուշ ուշ է ուտում, այն եւս մեծ տօն օրերում։

Դժուարամարս կերակուրների գործածութիւնը կամ ստամոքսի դատարկութիւնը, որովհետև իտալացին, համարեա թէ, կուշտ չէ ուտում, գործարանները թուլացնում է և առաջացնումէ ամեն տեսակ ստամոքսային հիւանդութիւններ, և այս է պատճառը որ խոլերան շատ յաճախ է պատահում իտալիայում։

Իտալիայի հիւանդանոցները շատ չքեղ տեսք ունին, որովհետև դոքա

գլխաւորապես երևելի անձանց պալատներ են չինում։ Թէև այժմ վենետիկի պատրիկների մեկ դահլիճը արած է երկու յարկանի, այնու ամենայնիւ ճանապարհորդը զարմանում է իւրաքանչիւր յարկի բարձրութեանը վերայ։

Շատ անգամ պատուհանների մի մասը բացվում են ջրանցքի վերայ, միւս մասերը — ծովեզրի վերայ, մի ուրիշ մասը ևս — մի որևիցէ կղզու և լակոնների անասահման տարածութեան վերայ, այնպէս որ դուք ձեր տան մէջ նստած կարողէք ամբողջ քաղաքը դիտել։ Ահաւասիկ մի մեծ ծածուկ նաւակ բեռնաւորված բակեղէններով, արկղներով և ճանապարհորդներով մօտիցդ անց է կենում, բայց նոցա ձայնը ամենևին չի լսվում — սա վենետկական հանրակառքն է։ Կատարեալ լռութիւն է — միմիայն հեռու ծովեզերքից լսուող ձայները ցոյց են տալիս, որ այնտեղ ևս կեանք կայ։ Օհ այս ի՞նչ ձայն է, որ լսվում է ձեր սենեկի պատուհանի տակից։ Մի ամբողջ շարք կօնդոլաների գնում են ջրանցքների վերայով։ Վառած մոմերը, տխուր երգեցողութիւնը, վարդապետները և կօնդոլայի մէջ տեղ դրուած սեաւ դագաղը ձեզ իսկոյն կհասկացնեն տեսարանի ինչ լինելը։ Մի վայրկեանից յետոյ ձեր ականջները լսում են բոլորովին տարբեր ձայներ։ Սոքա կօնդոլաների մէջ նստած մանրավաճառներն են, որոնք ուժեղ ձայնով կանչում են իւրեանց դեղձերը, գետնախնձորները և լն։ Այս ձայների ժամանակ ամէն կողմից բացվում են պատուհանները և օրիորդը սկսում է պատուհանից ծախս անել վաճառողների հետ։ Եւ վերջապէս օրիորդը պարանով մի կողովէ կախում փողը ևս մէջը դրած, մանրավաճառը փողի փոխարէն այնտեղ լցնում է ապրանք և կողովը ինչպէս որ վայր կախեցին այնպէս էլ վեր են քաշում։

Նորից խորին լռութիւն։ Ահա գալիս են երկու կօնտօլաներ և դուք կարծում էք, որ նրբանցքների նման նեղ ջրանցքներից ամենևին չեն կարող անցնել։ Կօնտօլավարները նախազգուշութեան համար կանչում են «ու — ու — ու — ու» և իսկոյն կօնտօլաները շրջապատում են։ Այստեղ նաւավարութիւն սովորում են տղայութիւնից, մինչև անգամ հարուստները պարտական են այդ բանը անելու։ Ինչպէս որ մեզանում ձի հեծնելու։ Ճանկարծ դուք տեսնում էք որ մի որևիցէ երևելի վենետկեցու թիերը շարժվում են սեաւ փայտից չինված, հիանալի կօնտօլան ապակեայ պատուհաններով և գեղեցիկ գորգերով զարդարված սլանում է ջրանցքի վերայով։ Շատ անգամ և թիավարում նոյն ինքն քնքոյշ տիկինը։ Բայց ահաւասիկ ափի մօտ չորս — հինգ տարեկան տղայք նաւակի մէջ խաղում են, քիչ է մնում որ նաւակը ընկղմի, բայց նոցա վերայ ոչ ոք չի մտածում, միթէ չէ՞ն վախենար տղայոց խեղդուելուց։ Եթէ մինը այսպիսի հարց աներ նոյնը կլինէր։ Եթէ մէր կողմում տղայոց խաղացած ժամանակ, մինը ասէր, չլինի թէ տղայքը գետնի տակ անցնին։

Մեծ ասն օրերում կօնտօլավարները հանդիսաւոր կերպով ցոյց են տալիս իւրեանց ճարտարութիւնը։ Այն ժամանակ մեծ ջրանցքը զարդարված

է, տների պատուհաններից կախած են կարմիր գորգեր և ամեն տեսակ գործուածքներ, պատուհանեն այնպիսի տեղեր, որ կախած են և վերմակներ և մինչև անգամ սաւաններ, մեծամեծների պալատների պատուհաններից կախած են ոսկենկար զրուագներով զարդարված ծածկոցներ. Ջրի մակերևոյթը ծածկուած է հազարաւոր կոնդոլներով, որոնք մեծ նաւագարաններով նաւակի շուրջն են հաւաքվում, որ զարդարված է ծաղիկներով, ծիրանիներով և մախմալ վարագոյրներով. Դէպի նաւագարանը մերձենալու ճանապարհը ընդհատւում է, մի փոքր ժամանակից յետոյ մեծ ջրանցքը ծածկվում է բազմաթիւ կոնդոլաներով, այնպէս որ կարծում ես թէ այլ ես հնար չկայ առաջ երթալու, բայց չէ. Ահաւասիկ յանկարծ որտեղից որ ձեր արագաշարժ կոնդոլան դուրս եկաւ և օձի նման սողալով իր փայլուն ամենքովը իւրեան ճանապարհ է բաց անում, և դեռ ես առաջ է թռ-չում։

Եթէ որ դուք ձեր պատուհանից մի որևիցէ ձայն էք լսում, դա կոնդոլավարների միմեանց հետ ունեցած վէճն է, նոքա ոչ թէ միմեանց հայհոյում են այլ և շատ ցանկանում են մինը միւսի դէմ գրգռել. ի՞նչ է անում. Կոնդոլավարը հարցնում է իր մօտից անցնողին—գինի—ուրեմն թողէք փորձենք»։ Եթէ որ մօտից անցնողը ուշադրութիւն չդարձնելով շարունակէ իր ճանապարհը, միւսները խեղճին կասեն, «նոքա գինի չեն տեսած . . . » և բոլորը սկսում են բարձրաձայն ծիծաղել. Եթէ որ կոնդոլան անցնում է անցորդով, կոնդոլավարները սկսում են նորան ծաղրել թէ ծանր բեռն է տանում, իսկ եթէ կոնդոլան դատարկ է անցնում, նորից ծաղրում են որ նա դատարկ է գնում։

Քաղաքի հանդարտ ժամանակ նոցա ձայները շատ հեռու տեղերում արոշ են լսվում. Ճանապարհորդին զարմացնում է այն տարածութիւնը, որ կոնդոլավարները միմեանց հետ խօսում են. նոքա իւրեանց մանկութիւնից սկսած են ջրանցքի մէկ ափից դէպի միւսը խօսել և այդ է պատճառը, որ նոցա ձայները համարձակ են և գոռ։

Յանկարծ մի հեռու տեղից լսվում է մանուկի համարձակ ձայնը, որ կոնդոլիայի մետաղեայ թիակը ուղղով մաքրելով երգում է մի որ և իցէ երգ. Փոքր առ փոքր կոնդոլավարները հաւաքվում են մանուկի շուրջը մանուկի երգը լսելու և իսկոյն նոցա հայհոյանքները դադարում են. Ահաւասիկ միւս եզերքից կանայք ևս լսեցին մանուկի երգի ձայնը, ահա նոքա ևս սկսեցին երգել և մի՛ քանի վայրկեան, ամենայն կողմից գեղեցիկ և կարգաւորեալ երգի քաղցր ձայն է լսվում. Բայց ջրանցքների վերայի այս կենդանութիւնը մինչև երեկոյ է, երեկոյեան դէմ ջուրը սկսում է դէպի ծովը երթալ—սկսվում է տեղատուութիւն. Երբոր ջրերը պակասում են, այն ժամանակ շինութիւնների պատերի կանաչ մամուռով և խեցեմորթերով ծածկված հիմքերը երևում են. Սանդուխների լպրծուն աստիճանների վերայ ամենևին չէ կարելի մնալ. Ջրով հարթված խողովակները բացած են իրեանց ահռելի բերանները, անճոռնի ծովի սարդերը շինութիւնների մերկ

զառիվայրի վերայով են վազում. մութ և թանձր ջուրը իր հետ տանում ձմերուկի կեղև, փետուր, կաղամբի թերթեր, փայտի բեկորներ, կօշկի կըտորներ, կոտրուած կուժը եւ բերանի վայր լողում ջրի վերայ, մէկ խօսքով ամեն տեսակ կեղտոտութիւններ ջուրը իւր հետ տանում դէպի ծովը. Օդը շնչասութեան համար շատ ծանր է թւում. հոտած հոտը ամենայն կողմ տարածվում . . . . . Ներքանչիւր վայրկեանում պակասած ջրի տեղ ամեն կողմից դուրս է գալիս կեղտոտութիւն և գեղեցիկ վենետիկը մէկ վայրկեան դառնում ամեն տեսակ կեղտոտութիւններով լցրած փոս։ Բայց աճա փողոցները նորից սկսեցին լցուել հողմով բերված ծովի ջրով. Ցըգնդքը, մանուկները շտապում են իւրեանց ոտը վերջացնել, և մաքուր ալիքը գալիս ու գալիսէ. Մէկ վայրկեանում աւազեայ վենետիկը մինչև ծնկները ծածկված է ջրով, բայց մի քանի վայրկեանից յետոյ, դուք նորից կարողէք նորա վերայով սահել կոնդոլայի մէջ նստած։։

Եթէ որ դէպի նեւքը ճանապարհորդը բղձում նախ և առաջ տեսնել վէճ—վէը, վենետկում ճանապարհորդներից ոչ մինը չէ կարող չգրաւվել այս քաղաքի գիշերվայ գեղեցկութիւնից Նորա գիշերային նուագները լսելով։ Եւ յիրաւի վենետկեցոց գիշերը ամեն մարդու եւս կարողէ զմայլեցնել։ Արծաթանման և առատ աստղերով ծածկված երկինքը փայլում է, Այստեղ մթնոլորտը այն աստիճան պարզ է, որ մինչև անգամ հեռաւոր տարածութեան մէջ կարելի է տեսնել բոլոր առարկաները, գիշերը այնտեղ աւելի շատ աստղեր կան քան թէ հիւսիսային երկիրներում, Դատարկ ջրային փողոցները մութ և հանդարտ են։ Բայց աճուասիկ բաժանվեցաւ երկար շուքը և կարմիր կետը ջրանցքը ընդ մէջ կտրելով անցաւ — սա կոնտօլան է իւր լապտերով։

Օտարականները լու նուագարանները սովորաբար նաւերից ապսպըրած պէտքէ լինին. Սորա համար հրաւիրում են տասն և հինգ բանւորներ, որոնցից ամենալաւ երգիչներ համարվում են ներկայարարները։ Երբոր մութը սկսվում, նորա բոլորը միասին հաւաքվում և կէս ժամի չափ երգում են, նստում են մի քանի կոնտօլաների մէջ և գնում են դէպի այն տեղը, որտեղ որ խօսք են տված նուագելու. «Եկ» երգում են երգիչները, «եկ իմ Նեննեթթայ, նաւակը պատրաստ է. Երկիրը երկինքը քեզ են սպասում իմ Նեննեթթա եկ»: և իտալական մեղեդիանման հիանալի ձայները հնչվում են շատ հեռու։

Առաւօտի կողմանէ Վենետիկը ընկած է։ Բոլոր առուտուրը կայանում միմիայն շնչին ապակեղէններ և ոսկեայ շղթաներ պատրաստելու մէջ, որոնք պատրաստում են ձեռքով. Բարակ ոսկի թելը մկրատով մանր մանր մասերի են բաժանում և երկաթեայ ունելիներով օղակներ են պատրաստում։ օղակների ծայրերը փոքրիկ կանթեղի վերայ բռնելով միմեանց հետ միացնում են, և մի քանի վայրկեանից յետոյ արհեստաւորի ձեռքից դուրս է գալիս պատրաստ շղթայ.